40 Անկանէր այնուհետեւ Անդովկ ի հնարս հնարել, եւ ի ծուփս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ո՛ գիտէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ի մէջ թագաւորացն երկոցունց: *41* Նախ բազում ոսկի զաւրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր, սոյնպէս եւ զամենայն մեծամեծսն կաշառէր, զի հնարեսցի քակել զմեծ սէրն՝ որ իցեն ի մէջ թագաւորացն երկոցունց: *42* Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին հարկանէին. առեալ ոսկւոյն կաշառաւք խաւարեցան: *43* Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի բանի իւրում առնէր Անդովկն զհնարաւորութեամբն, զնենգաւորութեանն դաւաճանութեամբ մեքենայութեամբն, զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ եւ ընդ Արշակ: *44* Եւ տայր նմա Անդոյկ ոսկի բազում եւ անհամար, եւ դնէր բանս ի բերան. զի իբրեւ կերպարանս գուշակի արասցէ ասել ցարքայ Արշակ, թէ ապրեցո զանձն քո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ եւ սպանանել: *45* Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, եւ զմեզ հրամայեսջիր կոչել ի խորհուրդն. եւ զքո բանս աւագանին հաստատեն:

46 Ապա գայր մտանէր խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խաւսել սկսանէր ընդ նմա զբանս ի բերան եդեալ Անդուկայն չարագործի, եւ ասէր՝ թէ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն քո. զի խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ եւ սպանանել: *47* Կայր հիացեալ եւ զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, եւ ասէ. Ի մեծի վաստակոցն իմոց ի վերայ ա՞յս հատուցումն ի նոցանէն: *48* Ապա հրաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամենայն զմեծամեծս իւր, եւ զամենայն խորհրդակիցս իւր, զՎասակ սպարապետն, եւ զԱնդովկն զաներ իւր, եւ որ միանգամ էին նախարարքն. եւ պատմէր նոցա զոր միանգամ լուաւ ինքն ի պարսկէ անտի: *49* Ապա եւ նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, ցքեզ չիշխեցաք ասել. այլ իրքդ այդ հաստատ են: *50* Բայց արդ, արքայ, գիտեա տես զիա՞րդ ապրեցուսցես զանձն քո եւ զմեզ: *51* Ապա արքայ Արշակ բազում պարգեւս գանձուց ոսկւոյ եւ արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ: *52* Եւ ինքեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց. եւ յառնէին ի գիշերի որ միանգամ մարդ էր ի բանակին Հայոց, հեծան ի ձիս եւ փախեան: *53* Եւ առ ետեղ թողին զխորանս եւ զվրանս, զկահ եւ զկարասի եւ զկազմած իւրեանց, եւ զբանակն իւրեանց, եւ գնացին գաղտուկ. եւ ոչ ոք ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչ ցայգ ցառաւաւտն:

54 Եւ իբրեւ եղեւ ժամ այգորելի առ թագաւորն Պարսից, եւ ամենայն թագաւորք եւ իշխանք մեծամեծք իւր այգորեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ի մէջ երեւէր թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծաւքն: *55* Ապա տայր հրաման Շապուհ թագաւորն Պարսից իւրոցն,